

ԱՐՏԱՇԷՍ ՏՈՆՃՈՅԷՆՑ

# ԱՐՏԻ ԱՆԵԱԿՆԵՐ



1948

Տպ. «ՏԻԳՐԻՍ» - Հայկապ



9

ԱՐՏԱՇԷՍ ՏՕՆՃՈՅԵՆՑ

# ՍՐՏԻ ԱԼԵԱԿՆԵՐ



499  
ՍԵՄ

ՄԱՏԵՆԱԴՐԱՆ  
 ԳՐԻԳՈՐ Գ. ՊՂԱՐԵԱՆԻ  
 ԱՅՆԹԱԳ - ՇԱԼԷՂ - ԳԼՅՈՒԻԹ  
 ԴԱՍ Ը ԹԻԻ 58



1948



Տպ. «ՏԻԳՐԻՍ» - Հալիպ

SECRET OF SERVICE



## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Բանաստեղծութիւնն յոյգ է, խաղ ու պար,  
Սրտի վեժվեժում՝ սաղերգ ու քնա՛ր.  
Հոգին ու շո՛ւնը մարդուն ու մեղուին .  
Ան սէր է անհուն՝ որով կ'առկայծին . . .  
Ու նրբին յոյսէ երկնի շղարհ է՝  
Որ արեալոյսին մուրր կը մաշէ .  
Ե՛ւ Լուսնի լող է ծովի — լանջին առուի՝  
Ուր բա՛ն մը արեւս յուշիկ կը մաղուի .  
Ե՛ւ դէպ՝ անդունդներ սահող Արեւին  
Շող—շող բոսո՛ւրն է վերջալուսային :  
Բանաստեղծութիւնն այն վարդն է բացուած,  
Որու մեջ ժպիտ դրած է Ասուած .  
Եւ անմեղ մանկան անպատում խիւղն է՝  
Որ սիրոյ յոյգեր, գիրկե՛ր կ'առինքնէ .  
Ո՛ւ բոցի դողն է կամ խաղե՛րզն անուշ՝  
Որ կ'իյնայ հոգիս իբր անցեալի յուշ :  
Բանաստեղծութիւնն արցունք է որբի,  
Որուն ի սես միտս հոգիս կը հարբի .  
Ան գեղեցիկն է՝ երազ ինքնագոյ,  
Ո՛ւ մտքի տեսիլ՝ « . . . խօսք ընդ Ասուծոյ . . . » :

## ԵՐԳԸ

---

Զօն եղբորս Բարսեղին

Լոյս — բիբերն երկնի շունչի խաղն ունին,  
Սրսիս լարերը խաղին սաղն ունին.  
Սեր — լարերն հազար հազար սաղեր են,  
Ո՛ր այն բիբերեն յոյզե՛ր մաղեր են... :

Բարսին շքունջի վերամբարձ լողն է,  
Կռունկն անբաւի անո՛ւշ մեկ դողն է.  
Անոնք երկնին երգեր կը հեւան,  
Անհունի համբան գրկեր՝ կը հեւան... :

Կեանքին վսեմը Սիրոյ յուզումն է,  
Երգն անոր անվերջ ծուփն ու սուզումն է.  
Ա՛հ, վառ երգն յաւե՛ս ինձ համար մնար,  
Սրսիս հրագ — սերն հոգի՛ս յար մնար... :

1936

## ԼՈՒՍԻՆ

---

Ա՛յ, ի՛մ Լուսին,  
Դուն՝ արբանեակ  
Հողի՛ս յոյզին . . .  
Ես՝ միտս անյագ  
Տե՛նչ քու լոյսին,  
Ուր կը հոսին  
Ճիչեր ոսին,  
Մումունջ ցրբին . . .  
Ու իմ հոգի՛ն . . .  
Ա՛յ իմ Լուսին :



## ՄԱՅՐ ԵՐԿԻՐ

---

Իբր յոյգ մ'անանուն՝ հազար հազար դար  
Հետդ շուռ եկայ, դարձայ սեր—հնար :  
Այժմ երբ կը նայիմ ձեւերուդ պես պես,  
Կրգգամ նոր յոյգի մ'անցնիլը արեսս . . .

Ու երգով մ'անհուն երբ կը խնկեմ քեզ,  
Դուն ալ շող—լարո՛վ մ'հոգիս կ'օրօրեսս . . . :  
Յուզումն արեւուդ սիրեցի արսանց,  
Որ կեանքով կ'եփե բնութիւնն անանց :

1938

## ԳԻՇԵՐԱՅԻՆ

---

Ա՛լ Գարուն է. այսօր գիշեր  
Դեպ՝ արեւելք ընդհաս ամպեր  
Յարափութիոյ ձեւ ու պասկեր  
Կը յօրինեն անհունն իվեր . . . :

Ամպերու հետ գաղտնիքի պէս  
Խաղն աստղերու կուգայ հանդէս .  
Երկինք մը դող կ'իջնէ որպէս  
Անմեկնելի խորհուրդի ծէս :

Սիրս մը սիրով գեղեցկացած  
Երկինքն ունի ժպիտ ու լաց . . .  
Կըզգամ էջքը հեւքի մը թաց,  
Ուր կը շողայ նշոյլ մ'աստուած . . . :

1941

## ԿՌՈՒՆԿԻՆ

---

Միջոցն ի վեր լող կուսաս,  
Սիրսդ արեւին՝ շող կուսաս.  
Լանջդ քել — խաղ կը մաղէ՝  
Ինձ տենչանքի դո՛ղ կուսաս :

Ի դաս քելիդ՝ դեռ կ'երգես,  
Կտուց մ'յոյզով սեր կ'երգես.  
Բիբդ անբաւին՝ միտս կ'երթաս՝  
Բան մ'անանուն վեր կ'երգես :

Ա՛յ, ուզածդ լո՞յս մըն է . . .  
Թռիչքդ միտս յոյզ մըն է՝  
Մո՛ւփ մը պարի կամ սիրոյ՝  
Որուն հեւքը սոյզ մըն է . . . :

## ԳԻՇԵՐ

---

Մայրամուսնի իվա՛ր  
Խոյս կուսայ լոյսն յար :  
Նորեն՝ գաղսնօրեն՝  
Մուրի հիւսկեններ  
Գիւե՛ր կը հիւսեն .  
Մեր լոյսն են յաղթեր՝  
Յուեե՛ր կը յուզեն . . . . :  
Վեր՝ կայծ — աշուկներ  
Մուրի մեջ խրեր՝  
Անփուն՝ հեւալին  
Լոյս — դո՛ղ կը մաղեն . . . . :  
Ա՛հ, հոգիս իջեր  
Մուրի հիւսկեններ՝  
Գիւե՛ր կը հիւսեն,  
Յուեե՛ր կը սուզեն . . . . :

## «ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ»

---

Խորհուրդ խորին՝ շուշա՛նը կոյս ,  
Որ այգուն դեպ՝ երկինք ու լո՛յս  
Կը քրթնայ սրտով ցօղոս՝  
Որպէս կեանքի ձեւ ու կարօս :

Խորհուրդ խորին՝ ովկիա՛նն անհուն ,  
Ուր մուսլի խաղեր քագուն  
Կ'եռան ու յար կը զարնուին  
Անդունդներուն խուլ ու մթին . . . :

Խորհուրդ խորին՝ երազ—հեռո՛ւն ,  
Որ հարիզոնն է աստղերուն .  
Հոն՝ մութին մեջ բիբս յարած՝  
Կ'որոնեմ լոյս—դռնակ մը բաց . . . :

Խորհուրդ խորին՝ հեփեա՛քն երկնի . . .  
Ուր դող մը մերթ կը շառագնի՝  
Մբո՛ւ միտի լեռան լանջին  
Բոսոր լուսնի այսն երկնային .

Այսն երկնային՝ պասկերն անո՛ււ ,  
Ուր կըզգամ յո՛յզ մ'իբրեւ հին յոււ :  
Ամեն խորհուրդ մտի պար է ,  
Որ սրտի մեջ տնչ կը շարէ . . . :

## ԴԱՐԵՐ

---

Դարեր եկան  
Ջերդ կարաւան  
Մեծ ուղտերու՝  
Իբր այցելու՝  
Ու գացին . . . :

Դարեր պիտ' գան  
Ջերդ կարաւան՝  
Աշխարհ մը շունչ  
Տանելու մունջ  
Միջոցին :

Վախկոտ դարեր  
Տեր են առեր  
Միտ իրենց հետ  
Իբր Ասուած — պէտ . . . :

Բայց գաղտնորէն  
Անոնք ամէն  
Մութ անհունէն  
Ո՞ւր գացին . . . :

## ՄԵՌՆԻԼ

---

Մեռնիլ գեռ բան է՝  
Սարսափ կը ցանէ .  
Մեռնելէ յետոյ՝  
Մուրն անսահման է . . . :

Մեռնիլ մեկ շունչ է՝  
Անհունի լանջէ  
Փրփած մեկ հառաչ՝  
Որ միշտ կը հնչէ . . . :

Մահն, ա՛յ, խաւար է,  
Ողբի արար է,  
Մտի լարերուն  
Գողե՛ր կը շարէ .

Ա՛ս ալ քնար է . . . :



## ՍԻՐԵՐԳ

---

. . . . .

Ու մարգարիս վառ սիրոյ  
Մեր այփին մեջ լնացած՝  
Մենք իրարու նայեինք  
Թարթել մոռցած՝ գրկաբաց . . . :  
Խորունկէն այդ պատկերին  
Քամուէր, մզուէր շունչս յետին  
Ու դառնար երգ մը վնիս,  
Երգ մը ֆնուռ, երգ նրբի՛ն,  
Ու միանար հոգիիդ :  
Ու միասին ես ու դուն  
Կազմած հոգի — միութիւն՝  
Ա՛հ, օրջեի՛նք, օրջեի՛նք՝  
Իբրեւ սիրե՛րգ մը անհուն . . . :

## Տ Ա Ղ Ս

---

Իբրեւ արեւ սիրս փոխասացութիւն՝  
Տաղն յոյզի լար մ'է ձգուած դարերուն . . .

Չէ՞ որ դարերէն լար հազար հազար  
Պիտի ունկնդրէ տաղ-սիրսն անդադար . . .

Իբրեւ տենչ ու կանչ՝ ե՛րգ տեսլականի՝  
Այս տաղն անհունի՛ն սիրսս կը տանի . . .

Չէ՞ որ անհունն ալ պիտի՛ բերէ սիրսեր՝  
Յուզելու տաղիս մեզ արտի՛կ մ'անտէր . . .

1931

• • •

Ինչո՞ւ սիրքս ալիք կուսայ, ալիք կ'առնե...  
Յոյզն աչքերուդ հոգիս ինկած՝ ծո՞վ կը խառնե... :  
Ինչո՞ւ սիրքս մեներգ ու սեր՝ հուր կը վառե...  
Կուրծքդ ինձի եղեմի բո՞յր կը բուրվառե... :  
Ուր որ ըլլամ՝ ինչո՞ւ հասակդ է յար ներկայ...  
Սա հակսիս սակ միայն յսակ մե՞կ պահկեր կայ... :  
Ժպիսդ առի, ժպիս տուի անմահօրէն...  
Երկինք մը խիւնդ հոգիս իջած է այն օրէն :  
Կը նախանձիմ անհունապէս՝ երբ օղն զեեզ  
Առնե՞ սանի իր գգուանիքն՝ հեռու աչքես :  
Կը նախանձիմ անբաւօրէն՝ երբոր հնչեն  
Անունդ ու եեզ առնեն սանիքն՝ բոյրդ շնչեն... :  
Ա՛յ, այս կեանքին բուն իմաստն է վսեմ սե՛րբ .  
Աչքիդ շողը հոգւոյս այզն է, արսիս՝ սե՛րբ :  
Լանջքս յանախ ալիք կուսայ, դո՞ղ կը խառնե...  
Խաղն աչքերուդ սիրս պրկած՝ հոգի՛ս կ'առնե... :

1920, Պոլիս

## ՀԱՄԵՐԳԸ

( Ա. Կանաչեանի համերգին առթիւ )

Սիրոյ գապուած հեւքի նման՝  
Փունջ մը ձայներ մումունջ կ'ըլլան .  
Կուրծքեր շարուած կ'եռան անդին ,  
Տակաւ նոր շունչ , կանչ կը յորդին :

Թովիչ , գերոյ պարի մը պէս  
Վառ վառ ձայներ կուգան հանդէս ,  
Մեր սրտերուն քրքիռ կուտան ,  
Լանջքս կ'իջնէ հե'ւք մ'անսահման . . . :

Համերգն է մերք քաղցր կարկաչ  
Ու մերք սաղերգ , երազ նանաչ . . .  
Որ կ'երկարին դէպի Աստուած  
Իբր յուր ու սեր՝ հոգիս գրկած :

Հոգիս երազն է Անհունին ,  
Երազին յոյզն է մեղեդի'ն .  
Ն'րգ , մեղեդի' . . . ապրում — կանչ են ,  
Որ սեր — արե'ւ կը նանանչեն :

Շունչ մեղմիկ , օրօր քննուր  
Կ'ընեն երգիչն հրեւսակ անուր ,  
Որ նիւքացած ոգի — շունչ է ,  
Աչքն անհունին՝ խա'ղ կը կանչէ . . . :

Յանկարժ մեկ ա'յլ սաղ հոգեքով  
Կը գլգլայ հոսուն խանդով .  
Տաղ՝ որ կուրծքիս արձագանգն է ,  
Որ հին սիրոյս դուրի վանկն է . . . :

1947, Հալեպ



Համերգ  
1947

## ... ՈՒՐ ՊԻՏԻ ԹԱՌԻ

---

Երբ կեանք—արեւըս յաւիտեան մարի  
Ու յեփն երգըս մութին երկարի . . .  
Անիւր բաղդին երբու վերջին հեղ  
Կանգ առնե փոսին դրան հով անեղ . . .  
Վերացող հոգիս՝ իբր յոյզ մը կանչի՝  
Պիտի որոնե դե՛մք Արարչի,  
Որուն այս հա՛րցը պիտի կարկառի .  
Սիրածիս ակնարկն ո՞ւր պիտի թառի . . . :

Երբ մեկնած հոգիս եղերգ մը կանչե,  
Եղերգ մը՝ թրուած սիրածի լանջե . . .  
Ու լաց մ'անանուն լայ ու թափառի,  
Անսահմանին մեջ ո՞ւր պիտի թառի . . . :

## ԱՇԽԱՐՀՆ ԵՍԻՍ

Ես՝ Ե՛ս մ՛ուռնիմ՝ աշխա՛րհն մը՝  
Տարբե՛ր ծանօթ աշխարհէն .  
Մարմին կոչուած նշխար մը  
Եկած Նիւթի անհունէն՝  
Սա եսիս բանսն եղած է .  
Աշխարհն ազատ է, բաց է .  
Իմ պզտիկ, գոց բայց անբաւ  
Աշխարհն եսիս յափրացա՛ւ  
Սա բարդացած, հին ու նոր  
Խոհերով մուր, լուռ ու խոր . . . . :

Չքուած միտքեր անհամար  
Որբա՛ն կ'յորդին, կ'իյնան վար  
Բորբ յասակն իմ աշխարհիս . . .  
Որբա՛ն կ'եռան, կ'օրրեն զիս . . . . :

Աշխարհ շեկած ի՛նչ խորին  
Բռնկումներ կը մարին .  
Ի՛նչ իպձեր լոյս չսեսած  
Մերք կը ծփան դեպ' Ասուած . . .

Եթէ յայգըս բարբոթի  
Քրիշ - վեցրով հրեցակի,  
Ես - աշխարհիս դրախտէն  
Սուկ բարութեան պտուղներ  
Պիտի ժպտին ու բուրեն . . . . :

Փայլակ - գրչով մ'երթե ես  
Լոյս վառէի սա ներսես,  
Կայծակ - հրաւե մը գուցէ  
Սուր մը ինծի սար բոցէ . . .  
Որով զինուած կենայի  
Պիտի դրան ֆովն Երկրի՝  
Շանթելու Չա՛րն յարայադր,  
Որ Հողն ըլլար նո՛ր դրախտ . . . . :

1947, Հալեպ

## ԱՒԽ, ԻՆՁԵՐ . . .

---

Ի՛նչ խիճոյ ու ժպիտ, ի՛նչ մանկական խաղ . . .  
Ա՛խ, ինչե՛ր թռան գացին այնքան վաղ :


Որքա՛ն շող – ակնարկ, գուրգուրանք անուշ  
Զգեցին մեզի միայն մթին յուշ :

Յոյս ու երգ ու խոկ, սեր, ցաւեր անձայն  
Ու ինչե՛ր, ինչե՛ր կը դողան կ'երթան . . . :

Կ'երթան ու հազաժ մութի սեւ փոշին՝  
Իրենց յուշն անգամ կուտան մշուշին . . . :

Տե՛ր իմ, սա ձեւ մ'ե մաս մաս մեռնելու՝  
Մեղմելու համար սարսափ մահու :

Ա՛խ, երնե՛կ մնար ճշոյլ մը կեանք գեթ՝  
Տեւեր ու ճեւա՛ր միշտ դարե՛րու հետ . . . :





## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

( Ասիկա մէկ տարբեր ծեսն է նախորդ  
« Բանաստեղծութիւն » ին )

Բանաստեղծութիւնն անհունն է կամ՝ անհուններ կ'երկնէ .  
Յոյահել Լուսնի շողն արեւաբոյր Անհունի երկն է :

Թող ամենքն ըսեն Աստուծոյ՝ Անհուն, Անհունին՝ Աստուած . . .  
Բոլորն ալ կ'անցնին՝ բանաստեղծութեան Ակե՛ն յոյգ ըմպած :

Բանաստեղծութիւնն երկնքի նրբին յոյսն շղարհ է,  
Որ արշալոյսին ծփանք առ ծփանք մուրր կը մաշէ :

Իրիկուան պահուն դեպի անդունդներ միտոյ արեւին  
Նող—շող բոսորը ֆերթողութի՛ւնն է վերջալուսային :

Բանաստեղծութի՛ւնն . Լուսնի լող է ան ծուփ-լանջին առուի ,  
Ուր սրեւս բան մը դիւբանքի բելին՝ խաղի կը սարուի . . . :

Բանաստեղծութիւնն հեզ, մենիկ կակաջ—կոկոն մ'է լռին,  
Որ սիրեն երբ բանայ, սարփանք-պարո՛վ մը կը ժպտի կեանքին :

Քերթողութիւնն է սա՛ ընդին դողը կամ խաղերգն անո՛ւն ,  
Որ կ'իյնայ սիրքս՝ հոն լար մ'յուզելու իբր անցեալի յու՛ն :

Բանաստեղծութիւնն, ա՛յ, հելք մը լանջերգ, բիբ մը խոր յոյգ է,  
Որ հոգւոյս ակնարկն հեռո՛ւն՝ Արեւէն անդի՛ն կը սուզէ . . . :

## ՄԻՏՔՍ Կ'ԸՍԷ . . .

---

Միտքս կ'ըսե՛ Արե՛ւ վրկայ՝  
Յեղիս ծագման արե՛ւը կայ,  
Որ կերտեց իմ գա՛նկըս ներկայ՝  
Որ ծընունդն իր նո՛ր կ'իմանայ . . . :

Սիրքս կ'ըսե՛ աշխա՛րհ վրկայ՝  
Թե Անհունի մեջ Բա՛ն մը կայ, —  
Է՛ն՝ որմե իբր եակ եկայ՝  
Որպէս նոյլ մ'արեւ Հայկայ . . . :

Հոգիս կ'ըսե՛ շո՛ւնչքս վրկայ՝  
Թե լանջիս մեջ Աստուած մը կայ, —  
Սե՛ր մը շատ հին՝ նո՛ր՝ մտտակայ՝  
Որ կ'երկնէ հայ կո՛ւրծի ապագայ . . . :

## ՀԱՅՐԵՆԻ ԿԱՐՕՏ

---

Անհունի մեկ բարկ հիւլէն, վայրկեանն եմ,  
Անթաղ յուշերու յոյզի ովկիանն եմ :

Հայրենի բոյնէ սեւ ծիծառ մ'ունիմ,  
Սրտէս կտուցին՝ վառ պատան մ'ունիմ . . .

Չե՞ որ սրտփի կարօտ հիւղ մ'ունիմ . . .  
Ա՛խ, իմ աշխարհըս դրախտ գիւղ մ'ունիմ :

Հոգիս՝ ե՛րգ մ'անհուն, մօր պատկե՛ր ունիմ . . .  
Ա՛խ, այն «մայր» սիրոյն բիւր տաղե՛ր ունիմ :

Գոմըս խոպան է . ջերմ կա՛րօտն ունիմ .  
Ա՛խ, գառնուկներուս շունչին հո՛տն ունիմ :

Գորտի օրօրին տենչ գիւտե՛ր ունիմ .  
Գարնան կարկաչէն սեր - յուշե՛ր ունիմ . . .

Ողբերգու հաւեով բարտի ծառ ունիմ . .  
Արարչի հեքեաթ սրտի պար ունիմ . . .

Առիւննող երկնիս շունչէն շունչ ունիմ .  
Հայ Աստուածներուս հունչէն հունչ ունիմ :

\* \* \*

Ախառ մը ունիմ՝ փնչո՛ցն էր հօր .  
Ա՛խ, ան օճախիս հե՛ւքն էր դարաւոր :

Առուս շարունակ մեր սան փոյն իվար  
Կ'երգեր պապերուս հին երգն ու կ'երթար . . .

Մեր գոռ գետի գիրկն անեղ ամեն հեղ  
Կըզգայի պապուս արտի գա'րկն ուժեղ :

Լուսինն հայ դեմքն'վ կը ծագեր գիշեր .  
Անոր լոյս - ակնեն Ասուած կը նայեր . . .

Ընկերներ, սողեր, խապեր բազմազան  
Ո՛հ, յիշատակներ՝ սուրբերու նման . . .

Մեր ժամու կուտի հողին անբասիր  
Ու ոսկորներուն դո՛ղն եմ տարագիր . . .

1930




## ՄԵՐ ԱՂԲԻՒՐԸ

---

Մեր աղբիւրն անվերջ հեփեաթ մ'է գիւղի,  
Սեր—երգն է հողի յոյգերով յղի.  
Անբաւ դարերու շո՛ւնչն է վիպական.  
Սիրսն իվար խաղե՛ր, շողե՛ր կը հեւան . . .

Անոր վագֆին մեջ կարկաշուն ինչքան  
Հայրենի պարեր, սերեր շուռ եկան . . .  
Անոր յոյզվն մեջ ժամանակն հոսուն  
Անդադար երգեց մեր պորտերն անհուն :

Ան բնայեց կոյս ցոլֆն արեւուն ծագման  
Ու հայ աղջրկայ ժպի՛սն աննման :  
Ճը՛ւ, անուշ սաղ մ'է աղբիւրն հեռակայ .  
Երազող հոգիս անո՛ր կը ցանկայ . . . :



## ՀԱՅՐԵՆԻ ՄԱՅԻՍ

---

Ա՛յ, հայրենի հեռա՛ւ մայիս,  
Հոգիս հեւփո՛ղ՝ ո՞ւր կը սանիս . . . :

Աչքես կախուած արցունքի շիթ՝  
Հիմա մենե՛րզն եմ կարօտիդ :

Գարուն կեանքի սեր-յուշերես  
Լուսնի շողո՛վ դու կը մաղես . . . :

Քու մեջ անվերջ սաղ կը լողայ . . .  
Սիրսս մայի՛ս յար կը խաղայ :

Է՛ն ֆայր յուզումն ես Միջոցին, —  
Տեսիլն էին՝ խորհուրդ խորի՛ն . . . :

Ա՛խ, սուզեի լանջդ ֆնար,  
Ըլլայի սոյլ, շողերգ ու պար . . . :

1934



## ԿԱՐՕՏԻ ՏԵՍԻԼՔ

---

. . . Տաղեր եւ յոյզի երազ մ'անմեկին  
Զիս գեղի'ս, օղի'ս, Արարչի'ս սարին . . . —  
Հին երգիքներէն ծեր շողեր սիւն—սիւն  
Աստուծոյ ակէն արե՛ւ կը հեղուն :

Հողի բնութեան սիրտն իվեր երկնի  
Շեկ ոգին բոցիս կայծ—հեքեաք ունի . . .  
Ու բոց բազուկներ վերէն ու վարէն  
Օնախս գրկած՝ յոյզե՛ր կը ցանեն . . . :

Մեր տունն համօրէն խա՛ղ է սրբօրում,  
Երազ է, երա՛զ,—բոսոր պար մ'անհուն . . .  
Շունն ու մրմն՛ւնն, տեւ-հեւք խօլախան  
Շուքիս շարժքնկեր՝ գուժերգի նման . . .  
. . . . .

Մեր Հաւերն եղե՛րզ մը կ'երգեն վերէն,  
Զոյլ բի՛բ են իրերն՝ արցո՛ւնք կը ցօղեն . . . :  
Երազ իղձ մ'հանեց դամբանն ի վեր գիս,  
Ուր շունչ մ'անսահման կը լեցուի հոգիս . . .

Ուր խոր սրտուքեան սարսուռն անդենի  
Սիրսս կը գեղու դողո՛վն հայրենի . . . :  
Կարօտի ծո՛ւփն եմ անուշ աշխարհիս,  
Եւ անգէ՛տ քե ան ո՛ւր կը սանի գիս . . . :

1932, Հալեպ

## ԶԱԻԱԿՆԵՐՍ

---

Երբ շունչքս յեփն երկին վերանայ,  
Պիտ' ըլլամ շող-շող աչեր հրեղեն,  
Որոնք Լուսնի հետ ձե՛զ պիտի դիտեն՝  
Իբրեւ արարչի աչե՛ր մտակայ :

Երբ անդարձ մեկնիմ՝ բոց կարօ՛սն հոգիս,  
Պիտ' ըլլամ սաւիղ, քնար մ'անանուն,  
Ձեր նուագ-լանջին կապուած լար մ'անհուն՝  
Որ ձեր արեւեկն հին երգն յուզէ զիս . . . :

Երբ լանջերնի՛դ ալ անցեալին երբան . . .  
Թող քնարէ ձեր հոգին լարէ լար՝  
ՆՈՐ ՍՐՏԻ մեջ ՀԻ՛ՆՆ յուզելու համար,  
Որ սիրսս ու հոգիս ապրին անսահման . . . :

1934

## ԱՐԵՒԻՆ

---

Արեւիս Արեւ՝  
Հի՛ն արարչութիւն ,  
Անսահման բարեւ  
Ու բախիծ անհուն  
Ե՛ւ իղծեր պէս պէս  
Կը յանձնեմ որպէս  
Ապրո՛ւմը կեանքիս ,  
Որ արեւս երբ մար  
Մտնէ փոս մ'իվար  
Ու դուն մի՛՛ես ծագիս ,  
Զանոնք ըսեպ դո՛ւն  
Յանուն իմ արսիս  
Զօնես գուարթուն  
Իմ գաւակներուս՝  
Իբրեւ անմար յոյզ ,  
Ու սիրսն անոնց մէջ

Երգ մ'ըլլայ անվերջ՝  
Թրթի՛ւր հոգւոյս . . . :  
Ա՛հ , բարի՛ Արփի ,  
Միայն՝ երանի  
Թախիծր հարբի՛  
Խրի վեր դեպի  
Խաւարն անհունի . . .  
Որ հիւղս երբ ընչէ ,  
Հոն շողերգն հնչէ՝  
« Այս » շէլնէ լանջէ . . . :



## ՀԱՅ ԿԻՆԸ

---

Գրֆին համաձայն  
Որ Աւետարան  
Կ'ըսուի, իմ մարմնի  
Մեկ մասն է անի՛ .  
Որ կը կոչուի կին՝  
Ընկերն իմ կեանքին :  
Եւ իրա՛ւ՝ անհուն  
Տենչով մ'երբ խոհուն  
Զաւկիս աչքին մեջ  
Նայիմ, հոն անեւջ  
Լոյսը ցեղային  
Կը տեսնեմ մեկին  
Ե՛ւ մեկ շէն շողիկ՝  
Անունը Աստղիկ,  
Որ սերն է սիրոյս,  
Որ զաւկիս այս կոյս  
Բիբը լուսաբեր  
Աչքես է երկնեւ . . . :

Հայ կինը ցեղէն  
Բա՛ն մը հրեղէն  
Կ'յուզէ, կ'արեւէ . . .  
Զե՞ որ արեւ է  
Ամուսնին հոգին,  
Որ կա՛յծն է Հայկին :

## ԶԱԽԱԿՆԵՐ ՈՒՆԻՄ

---

Հոգւոյս մտերիմ՝  
Զաւակներ ունիմ :  
Մականունն իրենց  
Կ'ըսուի Տօննոյենց .  
Անուննին ալ է  
Լուսին ու Վահէ,  
Քերոք ու Սերոք՝  
Մրսէս բռած սրով :  
Եկած խոր հինէն՝  
Անոնք կը բռնեն  
Սա ծանօթ ուղին՝  
Ակօսք կեանքին,  
Ուր գա՛րկ կը ցանեն  
Իրենց հօր սրսէն . . . :  
Զայնք ցեղային  
Զգուած անհունին՝  
Անհունէ հոսած  
Երգ մ'է յամբարաց,  
Որ մարմին առեր՝  
Զաւկիս մեջ կ'հոսի  
Կ'երթայ ա՛յլ սրսեր՝  
Իբրեւ ցեղ—ոգի . . . :  
Ու դեռ կը զգամ ես  
Հոսիլն հոգիէս  
Երգի՛ն անսահման՝  
Որ հե՛ւքն է Հայկեան . . . :

## Ե Ր Ա Ջ

---

Երազիս մեջ երազ մ'անհուն ես ապրեցայ .  
Օսար երկնի ցրտին , անյոյզ լանջին վրայ  
Լուսինն հայկեան շունչ նշուլեց ինձ այս գիշեր .  
Հոգիս մազնիս՝ հայ երազն եր իրեն փաշեր . . . :

Մեր լուսինն այց մ'ինծի տուալ գլխուս վերել ,  
Հիւղիս նակտի շողե՛րն յուզեց իբրել բարել .  
Երազ լուսինն յանկարձ դարձաւ մեծ հայելի ,  
Ուր ծագեցաւ դեմնն արփահել Հայկ Դիւցազնի :

Դիւցազնի աչքն արարչական հայոց երկրի  
Այգը բացաւ որ գուցէ իմ հոգիս բերկրի ,  
Ու հանանչեց գեղ ու կարօս , յոյզ անսահմա՛ն . . .  
Ու առի հոսն իմ եղեմի՛ս անմահական :

Հայելիէն գիւղս տեսայ դռները բաց . . .  
Կալերու գիրկն ինկած եզներ կարծես հարբած՝  
Դեղին պարը կը հեւային շեկ ցորենին .  
Ու կալերգի խաղե՛ր հոգիս կ'երկարէին . . . :

Տեսայ սահող երազ օրե՛ր, լոյս - պատկերնե՛ր . . .  
Մեկն անոնցմէ պապուս վսեմ վերացումն էր .  
Ու արեւներն իմ պապերուս յոյսի շողով  
Իջան սարին մեր աշխարհին ցոյ՛ գորով . . .

Հայ դրախտէն երանութեան յոյզե՛ր եկան . . .  
Մեղեդիներ հուսկ սարսուռաց հայ լուսնկան,  
Ուր խորհուրդներ արեւ հագան, վար սլացին,  
Ինձ շողահիւս օրրա՛ն մ'եղան լուսաբացին . . .

Լուսաւորչի հեփեաք դարձած վառ կանթե՞ղն էր,  
Որ ցեղիս կեանքն արեւեց հոն՝ բարձունքն ի վեր .  
Ա՛հ, ովսաննա՛ իբարձունքս, բիւր ովսաննա՛,  
Հայ երազին անմահութի՛ւնն ես ապրեցայ . . . :

1936, Հայկալ

## Տ Ա Ր Օ Ն

---

Դուն ի՛մ Տարօն , իմ գոյութեան յուզիչ օրրան ,  
Հոգւոյ , մտքի ո՞ր շողերով կամ սաղերով  
Մեծ ուխտի գամ , իյնամ գիրկդ սիրագորով ,  
Ո՛վ իմ Տարօն՝ յայգի կեդրո՛ն արարչութեան :

Բնութիւնն իր սերն առաջին դրախտահամ  
Նրգեց մօտիկն հիւլէ արթս՝ քու արթին մեջ ,  
Ուր ընպէր եմ Ասուծոյ հելք արե՛ւն անեղջ .  
Արդ կարօտիդ ես հսդեղենս ինչպէ՛ս տկամ :

Նախասխապարն ես աշխարհի , ո՛վ աշխարհ իմ .  
Էռն հմայք մք շէնք ու շուքդ ասուածաւեկն  
Կը Սաւառնի աստղածին Աստիշատէն՝  
Հոգիս գրկած , ու կապոյտիդ մեջ կը յածի՛մ . . . :

Սա լեզուիս մեջ մեռնալեան տուն հոգւոյս լարին՝  
Մեծ կուրծիդ հին զարկն ու շունչը կը նուագէ.  
Հայրենի՛ք իմ, գիտեմ, սիրելի համակ վերք է,  
Բայց վսե՛մ ես, ինչպէս կեանքիդ խորհուրդ խորի՛ն...

Արե՛ւ վկայ, Տարօ՛ն, լանջիդ զարկերն անհուն  
Ջաւակներուդ սիրտ նուագն յար պիտի լարեն.  
Հիմա անոնի՛ք մասունքն այդ սուրբ ցրուած թեւ՝  
Պիտի երգեն վահագնաշունչ՝ ասուածօրէ՛ն . . .

Կ'ուզէի որ մեջս մնար յոյգ մը միայն,  
Ան ալ լոկ դուն, դո՛ւն ըլլայիր, անո՛ւշ Տարօն,  
Ու արեւոտ աստուներուդ լոյս—լոգա՛նքը  
Կուզէի ինձ երկրէն մնար բաժին ու ձօն :

Նշխար մը սիւս ըլլայի սոսկ, ու անխորհուրդ  
Հովն առնէր զիս իր թելերուն, տանէր զարուն,  
Տանէր դնէր կուրծիդ վրայ, սրտփե՛րի՛  
Իբրեւ կեանքի ամեն ժամու տաղերգութի՛ւն . . .

Մրսիս մօտիկ՝ հեռո՛ւ աշխարհ, երկնի երես  
Մեծ յուզումիդ լողն ու խաղը կըզգամ գիշեր .  
Քու կարօտէն հոգիս ըլլար շուր մ'արծաթե՛  
Լուսնի նամբով ծոցըդ իյնար ու հոն երգե՛ր .—

Երկներ երկին եւ երկիրն իմ արի՛ Տարօն ,  
Ուր եղեգնեայ ծուխ ու բոցէն ամենաջերմ  
Վահագնեղբայր հոյ արեւնե՛ր կը վազէին . . .  
Երկներ երկին եւ Մեսրոպեան մի՛սքը վսեմ . . . :

1936



## ԽԱՂԻՍ ՀՈՂԸ

---

. . . Մեր մեծ ձմե՛ռն ալ փաղք ու անուշ էր .  
Սակայն ձիւն ու սառ երբ երկար օրեր  
Ծածկէին մեր շէն գիւղի հողն համակ,  
Անոր կարօ՛սը կ'եռար լանջիս սակ :

Խաղիս հողն էր ան, որ կը գրկեր զիս,  
Որ մտերիմ էր աչքիս ու արտիս . . . :  
Չիւննալին նորէ՛ն ես կը գտնէի  
Խաղրնկեր հողս՝ հողը ցանկալի : —  
Մարտ ամիսն երբ գար, բերէր սափ արեւ,  
Ու ձօներ մեզի շող — ժպիտ՝ բարեւ,  
Կ'երկարէր դեպի հոգիս բոյրն հողի,  
Որ արեւ — կեանքի յոյզովն էր յղի :  
Հոյլ մը երգ մեջքս յուզողն իմ հողն էր,  
Հին կեանքի ծուփն ալ իմ խաղիս դողն էր :  
Իմ յոյզն էր հողէն, հողի՛նն՝ անհունէն .  
Կարօսս անսահման՝ յոյզերս անհուն են . . . :



## ՄԵՐ ՍԱՔՈՒԻ\* ԿԵԱՆՔԷՆ

Սափուն՝ սարուած միտս խաղով մը վեզի՝  
Կուսայի անոր հասի՛ն իսկ հոգի .  
Հոն՝ ձմրան բուֆին՝ բուխերիկ—փողէն  
Անդուլ կ'ամբառնար շունչ մը հրեղէն .

Ու բոցն ու շուքը վեր վար կ'եռային  
Իբրեւ դող ու պար՝ նման « վեզ » խաղին :  
Ու կը փնչփնչար մտուրն ալ օրօ՛ր  
Մեր հսկայ գոմեռ հեւեովը հօր :

Իսկ անդին կոկոլ\*\* մեր ափուրն արի, —  
Հաւազգի իշխան, երգի՛չը թառի,  
Գիշեր իր անուշ կանչն հնադարեան  
Կը ձգէր դեպի սիրսն հի՛ն մթուքեան :

Խիզախ սի՛գ մըն էր այն թառերգն արու՝  
Վանելու համար անն երազ—պահու,  
Թե՞ ոչ յոյզ մըն էր՝ կարօ՛ճ մ'անփնին՝  
Ընծայուած այգու բացակայ լոյսին . . . :

Ա՛խ, այն գեղեցիկ, այն անմեղ կեանքէն  
Հեփեաթի մը շափ դիւթական ու շէն,  
Ու իմ խաղընկեր իրերէ՛ն անգին՝  
Գեթ մեկ վայրկեանի վայե՛լք մ'ինձ տային . . . :

\* Ախոռի մէկ անկիւնը մեծկակ բարձրաւանդակ մըն է սափուն,  
որու պատին մէջտեղն է օճախը իր բուխերիկով :

\*\* Կոկոլ — պոչը կլորածու :

## ՀԱՅՐԵՆԻՔ

---

Ա՛խ, մեռնի՛մ քեզի, քաղցրի՛կ հայրենիք,  
Ես մասաղ—ընծա՛յ քեզի, հա՛յ երկինք .  
Ու քեզի պաշտում՝ համակ սիրսս ալ խունկ՝  
Արեւ—տողն հոգիս քամոյ հա՛յ երդիք :

Ո՞ւր են հայրենի գութանն ու արփին,  
Որ ջերմ կուրծքին մեջ մեր բերրի դաշտին  
Մանի, նահանջի քարփանք ցանեցին,  
Զոր ես կը հեւամ՝ իբր ընծայ մը հին . . . :

Երկնի ու ծովու հեւքի հպումեն՝  
Հայկեան դրախտը անուշ ու անսանձ  
Երազը ծնաւ մեր անմահութեան,  
Որուն կը ձգտի հայ ոգին անանց :

Երազ կը դառնան մեր սարերն հսկայ,  
Ու միտքս հեռուն՝ վերեր կ'ամբառնայ . . .  
Իբրեւ ցանկալի երկինք մ'երկրային՝  
Արժայութի՛ւն է աշխարհն իմ գիւղին . . . :



## ԱՐԾԻԻ ՏԱՐՕՆՈՅ

( ԽՈՐՀՐԳԱՆԻՐ )

---

Ո՛վ արծիւ հայոց Տարօն Աշխարհի,  
Խեղ. աչքով նայողն եթէ ժպտի  
Քեզի ըսպառնալ . . . , Դո՛ւն, արքա՛յ հօր ,  
ԿՏՈՒԳԴ ըժՏԱՊԷ գամել բի՛բն անօր :

Եթ՛ որսխ մը նօր խլիրՏ մ՛իսկ փորձէ,  
Շլացո՛ւր աչն իր սուրով կայծակէ.  
Անօր մեջն ըրէ երկուք իհարկին ,  
Ինչպէս օձն է հո՛ն՝ սակր էու հանկին :

Կըսպասէ անեղ կանչիդ հայ արին .  
Թե՛ւ ՏՈՒՐ, ո՛ւժ ՏՈՒՐ հոգւով սկարին .  
Թռիչքիդ անչափն անգամ կը չափէ .  
Տկարին ընթացն համակ խարխափ է :

Տարօնի ժայռերդ ուժգին կ'երգեն դեռ  
«Քաջուքեամբ մեռցո՛ւք...» հայ պատգամն անմեռ.  
Մամիկոնեան շո՛ւնչն է դիւցազնական,  
Որ պիտի հեւայ ոյժմ եւ յաւիտեան :

Ո՛վ անմահ Տարօն, Դաւոս ու երկինք էս,  
Լե՛ռ, աղբի՛ւր եւ յո՛յզ, առի՛ւծ, արծիւ վես՝  
Որ իբրեւ կեանքի թռվյ՛ղ մը անվերջ՝  
Քեզ կը սահմանէ անսահմանին մեջ :

Տարօ՛ն, հաւասա՛, յոյզդ բոցեղէն  
Վահագն ասուածներ պիտ' ծնի նորէն .  
Ու սերն Ասդիկի արծի՛ւ պիտ' շարէ  
Հսկայ ժայռերուդ գլխին մարմարէ :

1935, Հալեպ



## ՋԱԻԱ՛ԿՍ

---

Լա՛ցդ գնաց՝  
Թա՛ցդ գնաց,  
Ժպիս մ՛ռնիս՝  
Ա՛ն մնաց :

Կի՛րֆդ գիտեմ,  
Չի՛րֆդ գիտեմ,  
Հոգիս մե՛ջը  
Կը դիտեմ :

Կանչդ վառ ե՛  
Լանջդ վառ՝ Է  
Հե՛կես լարուած  
Կիբառ ե :

Խաղրդ ըսե՛՛  
Տաղրդ ըսե՛՛  
Լարը սրե՛՛ս  
Մի՛տես լսե՛... :


Հունչըդ առի՛  
Շունչըդ առի,  
Հոգիս վրա՛ն  
Կը քառի... :

Ծա՛փդ կ՛երգգմ,  
Չափդ կ՛երգեմ՝  
Սրսիս մեջ սո՛ն  
Կը սարֆեմ :

❖ ՏԱՆԿ ❖

|                      |    |
|----------------------|----|
|                      | Էջ |
| Բանաստեղծութիւն      | 3  |
| Երգը                 | 4  |
| Լուսին               | 5  |
| Մայր երկիր           | 6  |
| Գիշերային            | 7  |
| Կռուկկին             | 8  |
| Գիշեր                | 9  |
| « Խորհուրդ խորին »   | 10 |
| Գարեք                | 11 |
| Մեռնիլ               | 12 |
| Լուսին               | 13 |
| Սիրերգ               | 14 |
| Տաղս                 | 15 |
| . . . .              | 16 |
| Համերգը              | 17 |
| . . . Ո՛ւր պինի թառի | 18 |
| Աշխարհն եսիս         | 19 |
| Ա՛խ, ինչե՛ր . . .    | 20 |
| Բանաստեղծութիւն      | 23 |
| Միսքս կ'ըսե . . .    | 24 |
| Հայրենի կարօս        | 25 |
| Մեր աղբիւրը          | 27 |
| Հայրենի մայիս        | 28 |
| Կարօսի Տեսիլք        | 29 |
| Զաւակներս            | 31 |
| Արեւին               | 32 |
| Հայ կինը             | 34 |
| Զաւակներ՛ր ունիմ     | 35 |
| Երազ                 | 36 |
| Տարօն                | 38 |
| Խաղիս հողը           | 41 |
| Մեր սափուի կեանքն    | 42 |
| Հայրենիք             | 43 |
| Արծիւ Տարօնոյ        | 44 |
| Զաւա՛կս              | 46 |





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0316564

Մ 22  
564



Գ Ի Ն

|                   |     |              |
|-------------------|-----|--------------|
| ՍՈՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ | 150 | Սուր. Գինկն. |
| ԱՐՏԱՍԱՀՄԱՆ        | 1   | Տոլար        |

Հեղինակին հասցեն՝  
**Ardachès Der - Hovannessian**  
Eglise Arménienne Orthod.  
ALEP — Syrie